# ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## 1. Ավանդի նկարագրություն, էական դրույթներ՝

## «ԴԱՍԱԿԱՆ ԲԻԶՆԵՍ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

**Հրապարակվել է՝ 01.04.2026թ.**

1. Ավանդը ներդրվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից:
2. Ավանդն առանց լրացուցիչ մուտքագրումների և ելքագրումների է:
3. Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:
4. Ավանդի ժամկետը սահմանվում է 30 օրից մինչև 730 օր: Այն դեպքում, եթե Ավանդի վերջնաժամկետը ոչ աշխատանքային օր է, ապա Ավանդի գումարը վերադարձվում է հաջորդ աշխատանքային օրը, իսկ Ավանդի դիմաց տոկոսագումարները հաշվարկվում են Ավանդի՝ պայմանագրով սահմանված ժամկետի համար՝ ավելացված նաև ոչ աշխատանքային օրերի համար հաշվարկված տոկոսագումարները:
5. Ավանդի ներդրման նվազագույն գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամ, 400 եվրո,20,000 ՌԴ ռուբլի:
6. Ավանդի առավելագույն չափը սահմանված չէ:
7. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են Ավանդի ժամկետի ավարտին, ամսական պարբերականությամբ կամ ամսական կապիտալացմամբ՝ Ավանդատուի ընտրությամբ:

Ավանդի տոկոսադրույքներ (պարզ (անվանական) տոկոսադրույք)
տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ

| Արժույթ/Ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.65% | 6.17% | 7.09% | 7.52% | 8.02% | 8.50% | 9.09% | 9.60% | 9.65% | 9.70% |
| Եվրո | 0.40% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.74% | 0.84% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.68% | 4.83% | 5.02% | 5.03% | 5.18% | 5.32% | 5.61% | 6.00% | 6.25% | 6.40% |

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)*
տոկոսները ժամկետի վերջում վճարմամբ

| Արժույթ/Ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.80% | 6.33% | 7.28% | 7.71% | 8.21% | 8.68% | 9.20% | 9.60% | 9.44% | 9.27% |
| Եվրո | 0.40% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.74% | 0.84% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.79% | 4.93% | 5.12% | 5.12% | 5.25% | 5.39% | 5.65% | 6.00% | 6.16% | 6.21% |

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

Ավանդի տոկոսադրույքներ (պարզ (անվանական) տոկոսադրույք)
տոկոսների ամենամսյա վճարմամբ

| Արժույթ/Ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.65% | 6.12% | 7.01% | 7.41% | 7.86% | 8.30% | 8.76% | 9.13% | 8.98% | 8.83% |
| Եվրո | 0.40% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.74% | 0.84% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.68% | 4.80% | 4.98% | 4.98% | 5.11% | 5.24% | 5.48% | 5.81% | 5.96% | 6.01% |

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)*
տոկոսների ամենամսյա վճարմամբ

| Արժույթ/Ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.80% | 6.30% | 7.24% | 7.66% | 8.15% | 8.62% | 9.12% | 9.52% | 9.36% | 9.19% |
| Եվրո | 0.40% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.44% | 0.74% | 0.84% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.77% | 4.91% | 5.10% | 5.09% | 5.23% | 5.37% | 5.62% | 5.97% | 6.13% | 6.17% |

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար պանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

## «ՈՒՆԻՎԵՐՍԱԼ ԲԻԶՆԵՍ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

1. Ավանդը ներդրվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից:
2. Ավանդի գումարի վրա թույլատրվում է կատարել անսահմանափակ քանակությամբ մուտքագրումներ և ելքագրումներ:
3. Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:
4. Ավանդի ժամկետը սահմանվում է 30 օրից մինչև 730 օր: Այն դեպքում, եթե Ավանդի վերջնաժամկետը ոչ աշխատանքային օր է, ապա Ավանդի գումարը վերադարձվում է հաջորդ աշխատանքային օրը, իսկ Ավանդի դիմաց տոկոսագումարները հաշվարկվում են Ավանդի՝ պայմանագրով սահմանված ժամկետի համար՝ ավելացված նաև ոչ աշխատանքային օրերի համար հաշվարկված տոկոսագումարները:
5. Ավանդի ներդրման նվազագույն գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամ, 400 եվրո,20,000 ՌԴ ռուբլի:
6. Ավանդի առավելագույն չափը սահմանված չէ:
7. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են Ավանդի ժամկետի ավարտին:
8. Թույլատրվում է Ավանդից կատարել ելքագրումներ սկսած Ավանդի ձևակերպման հաջորդ օրվանից, մինչև Ավանդի ժամկետի ավարտման նախորդ օրը: Ավանդից ելքագրման ենթակա գումարի չնվազող մնացորդը կազմում է տվյալ պահին Ավանդի 50%, Ավանդի ողջ ժամկետի ընթացքում չնվազող մնացորդն ունի ավելացման բնույթ (կուտակման արդյունքում): Ելքագրման դեպքում չնվազող մնացորդը չի նվազում:
9. Ավանդատուի կողմից վերջին մուտքագրումը Ավանդին կարող է կատարվել Պայմանագրով նախատեսված ավանդի վերադարձման օրվանից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր առաջ (ներառյալ Ավանդի վերադարձման օրը):

Ավանդի տոկոսադրույքներ (պարզ (անվանական) տոկոսադրույք)՝

| Արժույթ/ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.63% | 5.81% | 6.69% | 7.10% | 7.57% | 8.02% | 8.46% | 8.81% | 8.94% | 9.09% |
| Եվրո | 0.39% | 0.25% | 0.07% | 0.06% | 0.08% | 0.10% | 0.22% | 0.12% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.59% | 4.39% | 4.52% | 4.54% | 4.69% | 4.85% | 5.06% | 5.38% | 5.54% | 5.59% |

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերություն (APY)՝

| Արժույթ/ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.78% | 5.95% | 6.86% | 7.27% | 7.74% | 8.18% | 8.55% | 8.81% | 8.76% | 8.71% |
| Եվրո | 0.39% | 0.25% | 0.07% | 0.08% | 0.10% | 0.11% | 0.22% | 0.12% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.69% | 4.47% | 4.60% | 4.61% | 4.76% | 4.91% | 5.09% | 5.38% | 5.47% | 5.45% |

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար զանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

## «ՀԱՄԱԼՐՎՈՂ ԲԻԶՆԵՍ» ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐԻ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԱՎԱՆԴ

1. Ավանդը ներդրվում է ՀՀ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից:
2. Ավանդի գումարի վրա թույլատրվում է կատարել անսահմանափակ քանակությամբ մուտքագրումներ:
3. Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, Եվրո և ՌԴ ռուբլի արժույթներով:
4. Ավանդի ժամկետը սահմանվում է 30 օրից մինչև 730 օր: Այն դեպքում, եթե Ավանդի վերջնաժամկետը ոչ աշխատանքային օր է, ապա Ավանդի գումարը վերադարձվում է հաջորդ աշխատանքային օրը, իսկ Ավանդի դիմաց տոկոսագումարները հաշվարկվում են Ավանդի՝ պայմանագրով սահմանված ժամկետի համար՝ ավելացված նաև ոչ աշխատանքային օրերի համար հաշվարկված տոկոսագումարները:
5. Ավանդի ներդրման նվազագույն գումարը կազմում է 200,000 ՀՀ դրամ, 400 եվրո, 20,000 ՌԴ ռուբլի:
6. Ավանդի առավելագույն չափը սահմանված չէ:
7. Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում են Ավանդի ժամկետի ավարտին:
8. Ավանդատուի կողմից վերջին մուտքագրումը Ավանդին կարող է կատարվել Պայմանագրով նախատեսված ավանդի վերադարձման օրվանից ոչ ուշ, քան 30 օրացուցային օր առաջ (ներառյալ Ավանդի վերադարձման օրը):
9. Ավանդը կարող է մարվել ժամկետից շուտ՝ ըստ ավանդատուի պահանջի: Վաղաժամկետ մարման դեպքում, տոկոսները հաշվարկվում են տվյալ պահին իրավաբանական անձանց համար սահմանված ցպահանջ ավանդի տոկոսադրույքով՝ ելնելով Ավանդի մնացորդից և փաստացի Բանկում պահված լրիվ օրերի թվից:

Ավանդի տոկոսադրույքներ (պարզ (անվանական) տոկոսադրույք)՝

| Արժույթ/ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.64% | 6.07% | 6.98% | 7.40% | 7.89% | 8.36% | 8.91% | 9.38% | 9.45% | 9.53% |
| Եվրո | 0.40% | 0.38% | 0.32% | 0.33% | 0.33% | 0.34% | 0.58% | 0.62% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.66% | 4.68% | 4.85% | 4.86% | 5.02% | 5.17% | 5.43% | 5.79% | 6.02% | 6.15% |

Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերություն (APY)՝

| Արժույթ/ժամկետ | 30օր | 60օր | 90օր | 120օր | 150օր | 180օր | 270օր | 365օր | 540օր | 730օր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ՀՀ դրամ | 5.79% | 6.22% | 7.16% | 7.59% | 8.08% | 8.54% | 9.01% | 9.38% | 9.25% | 9.11% |
| Եվրո | 0.40% | 0.38% | 0.32% | 0.33% | 0.33% | 0.34% | 0.58% | 0.62% | - | - |
| ՌԴ ռուբլի | 4.76% | 4.77% | 4.94% | 4.94% | 5.09% | 5.23% | 5.46% | 5.79% | 5.94% | 5.97% |

Ամփոփագրում նշված պայմանները կարող են փոփոխվել, ինչի մասին տեղեկանալու և այլ մանրամասն տեղեկություններ ստանալու համար պանգահարեք 87-87 հեռախոսահամարով, այցելեք Բանկի մոտակա մասնաճյուղ կամ ինտերնետային կայք՝ www.vtb.am հասցեով:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ՝ ՁԵՐ ԱՎԱՆԴԱՅԻՆ ՀԱՇՎԻՆ ԱՌԿԱ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՀԱՇՎԱՐԿՎՈՒՄ ԵՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ: ԻՍԿ ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՑՈՒՅՑ Է ՏԱԼԻՍ, ԹԵ ՈՐՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ ԿՍՏԱՆԱՔ ԴՈՒՔ՝ ՁԵՐ ԿՈՂՄԻՑ ԱՎԱՆԴԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅԱՄԲ ՎԱՍՏԱԿԱԾ ՏՈԿՈՍԱԳՈՒՄԱՐՆԵՐԸ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ: ՏԱՐԵԿԱՆ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՏԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԿԱՐՈՂ ԵՔ ԳՏՆԵԼ ՍՈՒՅՆ ԱՄՓՈՓԱԳՐԻ 3-ՐԴ ԿԵՏՈՒՄ:

**2. Էական դրույթներ՝**

1. «Ամսական պարբերականությամբ» կամ «Ամսական կապիտալացմամբ» տոկոսագումարների վճարմամբ Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսագումարները վճարվում կամ կապիտալացվում են Ավանդատուի հաշվին Ավանդի ներդրման հաջորդ օրվանից սկսված յուրաքանչյուր ամիս (30 օրացուցային օր պարբերականությամբ):
2. Ժամկետային ավանդի տոկոսները հաշվարկվում են գումարը Բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն Ավանդատուին վերադարձնելու կամ Ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար: Տոկոսները հաշվարկվում են Ավանդի փաստացի մնացորդի նկատմամբ: Ավանդատուի ընտրությամբ, Ավանդի ժամկետի ավարտին տոկոսագումարները կարող են կապիտալացվել Ավանդի գումարին և ավտոմատ երկարաձգվել:
3. Ավանդի համար սահմանված տոկոսային եկամուտը փոխանցվում է Բանկում Ավանդատուի բանկային կամ քարտային հաշվին (եթե առկա չէ Ավանդատուի այլ հանձնարարականը):
4. Ավանդի համար պայմանագրով սահմանված տոկոսադրույքը պայմանագրային ժամկետում փոփոխման ենթակա չէ:
5. **«Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝** Ավանդատուին Ավանդի դիմաց հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես Ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտային հարկ՝ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե:
6. Դուք իրավունք ունեք հաղորդակցվել Բանկի հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումն ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:
7. Ավանդը Բանկային ավանդի Պայմանագրով պայմանադրված ժամկետում չպահանջվելու դեպքում, Հաճախորդի կողմից համապատասխան նշման առկայության դեպքում Ավանդային պայմանագիրը երկարաձգվում է նույն ժամկետով և արժույթով, երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար գործող պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույքը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդատեսակի համար Բանկում գործող տոկոսադրույքը Համապատասխան ավանդատեսակի պայմաններով այլ բան նախատեսված լինելու դեպքում հիմք են ընդունվում այդ պայմանները:
8. Տվյալ ժամկետային Ավանդի (արժույթի) ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, Ավանդի Պայմանագիրը ավտոմատ չի երկարաձգվում և Ավանդի գումարը մուտքագրվում է տվյալ Ավանդի պայմանագրում նշված Ավանդի մարման հաշվին նույն արժույթով՝ տվյալ բանկային հաշվի համար տվյալ Բանկում գործող պայմաններով և սակագներով: Այս դեպքում Բանկը տեղեկացնում է ավանդատուին պայմանագրով նախընտրած ծանուցման եղանակով՝ ավանդային պայմանագրի ժամկետը լրանալու օրվանից 15 (տասնհինգ) օրացուցային օր առաջ:
9. Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Կախված Ավանդի դադարեցման ժամկետից կատարվում է տոկոսների վերահաշվարկ 0.1% տարեկան տոկոսադրույքով:

**3. «Տարեկան պարզ (անվանական) տոկոսադրույք»-ի հաշվարկման օրինակ՝**

Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝
(200,000 ՀՀ դրամ) * 10% =20,000 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:
**Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝**
**«APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)»՝ տվյալ ավանդատեսակի համար հաշվարկված ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:**
APY – տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝
(200,000 ՀՀ դրամ) 9.97% = 19,940 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:
Ավանդի առավելագույն գումար բոլոր ավանդատեսակների համար՝ AMD-առանց սահմանափակման, EUR-80,000 եվրո, RUR-50,000,000:

**4. Վեճերի լուծման կարգը՝**

1. Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
2. Հաճախորդն հնարավորություն ունի Բանկի և իր միջև բխող բողոք-պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

3. **Տեղեկացնում ենք,** որ Բանկը կնքել է ֆինանսական համակարգի հաշտարարի որոշումները վիճարկելու իրավունքից հրաժարվելու վերաբերյալ համաձայնագիր այն պահանջներով, որոնց ընդհանուր չափը չի գերազանցում 250,000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը և գործարքի ընդհանուր գումարը չի գերազանցում 500,000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը:
4. Հաշիվը և դրանում եղած դրամական միջոցները տնօրինելու հաշվետիրոջ իրավունքները կարող են սահմանափակվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների կամ հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա:
5. Առանց հաշվետիրոջ կարգադրության հաշվից դրամական միջոցների բռնագանձումը կարող է իրականացվել դատարանի վճռով դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող մարմինների և հարկային մարմինների կողմից ներկայացված հայտի հիման վրա: Ընդ որում, Հաճախորդն իր հաշվից դրամական միջոցների բռնագանձման վերաբերյալ տեղեկացվում է տվյալ հաշվի քաղվածքի միջոցով՝ իր կողմից նախապես ընտրված հաղորդակցման /քաղվածքի ստացման/ եղանակով և կարգով (քաղվածքի ծանուցման եղանակի բացակայության դեպքում՝ փոստով՝ բնակության կամ հաշվառման հասցեով):
**6. Ավանդ են համարվում նաև իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները:**
**7. Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):**
**8. Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA))» հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:**

**5. Բանկային ավանդի բացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ**
**1. Ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթեր.**
1) Կազմակերպության կանոնադրությունը,
2) Իրավաբանական անձի պետական գրանցման վկայականը՝ ներդիրներով կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (այն իրավաբանական անձանց մասով, որոնց պետական գրանցումը հավաստվում է քաղվածքով),
3) ՀՎՀՀ-ն (հարկ վճարողի հաշվառման համար) հաստատող փաստաթուղթը, եթե ՀՎՀՀ-ն ներառված չէ պետական ռեգիստրի գրանցման վկայականում/ քաղվածքում,
4) Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձի/ անձանց տվյալ պաշտոնում նշանակման մասին հրաման (հրամաններ) կամ որոշում (որոշումներ)/ որոշումից քաղվածք,
5) Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ,
6) Լրացուցիչ տեղեկատվություն՝ այդ թվում 10% և ավելի բաժնեմասնակցություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցման վկայական/ քաղվածք (անհրաժեշտության դեպքում նաև ՀՎՀՀ և կանոնադրություն) ՝ իրավաբանական անձանց դեպքում: Ղեկավարի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ սույն կետի 5-րդ ենթակետում նշված դեպքերի,
7) Այլ լրացուցիչ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում (լիցենզիա, լիազորագիր և այլն):

**2. Անհատ ձեռնարկատերերի կողմից ներկայացվող փաստաթղթեր.**
1) Անհատ ձեռնարկատիրոջ պետական հաշվառման վկայականը՝ ներդիրներով կամ միասնական պետական գրանցամատյանից տրված քաղվածք (այն անհատ ձեռնարկատերերի մասով, որոնց պետական հաշվառումը հավաստվում է քաղվածքով),
2) ՀՎՀՀ-ն (հարկ վճարողի հաշվառման համար) հաստատող փաստաթուղթ, եթե ՀՎՀՀ-ն ներառված չէ պետական հաշվառման վկայականում/քաղվածքում,
3) Անձը հաստատող փաստաթուղթ և սոցիալական քարտ (հանրային ծառայությունների համարանիշ), վերջինիս բացակայության դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան տեղեկանք,
4) Այլ լրացուցիչ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում (լիցենզիա (արտոնագիր), լիազորագիր և այլն):

**3. Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից ներկայացվող փաստաթղթեր.**
1) Հիմնադիր փաստաթղթեր (կանոնադրություն, պայմանագիր կամ այլ փաստաթուղթ, որը նախատեսված է իրավաբանական անձի գրանցման երկրի օրենսդրությամբ),
2) Իրավաբանական անձի պետական գրանցումը վկայող փաստաթուղթ,
3) Հարկային մարմնում հաշվառման փաստաթուղթ,
4) Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձի/ անձանց տվյալ պաշտոնում նշանակման մասին հրաման (հրամաններ) կամ որոշում (որոշումներ)/ որոշումից քաղվածք: Տվյալ փաստաթղթերը չեն պահանջվում այն դեպքում, եթե տվյալ անձի անունը նշված է պետական գրանցումը վկայող փաստաթղթում,

5) Հաշիվներով գործարքներ իրականացնելու իրավասություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ,
6) Լրացուցիչ տեղեկատվություն՝ այդ թվում 10% և ավելի բաժնեմասնակցություն ունեցող անձանց անձը հաստատող փաստաթուղթ՝ ֆիզիկական անձանց դեպքում, պետական գրանցման մասին վկայող փաստաթուղթ (անհրաժեշտության դեպքում նաև ՀՎՀՀ և կանոնադրություն) ՝ իրավաբանական անձանց դեպքում: Ղեկավարի և գլխավոր հաշվապահի անձը հաստատող փաստաթուղթ, բացառությամբ սույն կետի 5-րդ ենթակետում նշված դեպքերի,
7) Այլ լրացուցիչ փաստաթղթեր անհրաժեշտության դեպքում (լիցենզիա, լիազորագիր և այլն):

**Հաճախորդն իրավունք ունի հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ իր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:**